Ուսուցչի ձեռնարկ

4

Փորձություններ

Նախապատրաստվել և պատասխանել փորձություններին

Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար

Փորձություններ

Նախապատրաստվել և պատասխանել փորձություններին

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսուցչի ձեռնարկ

5-րդ խմբագրում

ԽՈՒՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Փորձություններ
Ուսուցչի ձեռնարկ
5-րդ խմբագրում
Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, Temptation, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Ստուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել.

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org

Վերջին անգամ վերանայվել է. 09-2017

Փորձություն

Փորձությունը յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքի ամենասովորական բաներից մեկն է: Այս դասընթացի հիմնական նպատակն է՝ նորադարձ քրիստոնյային ներկայացնել մի քանի գործնական քայլեր, թե ինչպես պետք է վարվել փորձության դեպքում:

1

Գլուխ 1. Փորձությունը նորադարձ քրիստոնյայի կյանքում

Մենք ուսումնասիրում ենք, թե ինչ է փորձությունը և ինչքանով է այն համընկնում քրիստոնեական կյանքի հետ: Մենք լուրջ ուշադրություն ենք դարձնում մեր կյանքի կարիքներն ու ցանկությունները հայտնաբերելուն, որոնք կապ ունեն այն ասպարեզների հետ, որտեղ մենք հանդիպում ենք փորձությունների:

2

Գլուխ 2. Փորձությունները հաղթահարելու ընթացքը

Այս գլուխը մի քանի գործնական քայլերի մասին է, որոնք դու կարող ես օգտագործել փորձությունների հանդիպելիս:

3

Գլուխ 3. Ինչպես նախապատրաստվել փորձություններին

Այս գլուխը ներկայացնում է գործնական քայլեր, որոնք կարելի է անել փորձություններին նախապատրաստվելու համար: Մենք ուսումնասիրում ենք, թե ինչպես քրիստոնյաները կարող են մոտենալ Աստծուն և իրենց կարիքները բավարարել Աստծո ասած ձևով: Մենք նաև դիտարկում ենք, թե ինչպես մենք կարող ենք մեր ցանկություններն Աստծուն հաճելի ձևով ուղղորդել:
Նաև ներառված է քննարկում այն մասին, թե ինչպես որոշ փորձություններ կարելի է կանխարգելել:

4

Գլուխ 4. Հասկանալ Աստծո տեսակետը ձախողման և վերականգնման հարցում

Անխուսափելի է այն փաստը, որ նորադարձ քրիստոնյաները կզիջեն որոշ փորձությունների և մեղք կգործեն: Մենք ուսումնասիրում ենք, թե ինչ է տեղի ունենում Աստծո հետ ունեցած մեր փոխհարաբերությունների հետ, երբ մենք մեղք ենք գործում, ինչպես նաև՝ թե ինչ պետք է անենք, եթե զիջել ենք փորձությանը:

Ինչ է ներառված Ուսուցչի ձեռնարկում

Ուսուցչի ձեռնարկն ունի չորս բաժին: Յուրաքանչյուր բաժին առանձնացված է հիմնական վերնագրով:

1. Դասի ծրագրեր ուսուցչի համար,
2. Ուսանողի ձեռնարկ,
3. Ուսուցման ուղեցույց,
4. Ուսանողի ստուգարք, պատասխաններ և դասընթացի վկայական:

Բացատրությունը, թե ինչպես օգտագործել յուրաքանչյուր բաժինը, տրվում է անմիջապես տվյալ էջը ներկայացնելուց հետո:

Նախաբան

Այս դասընթացը մեկն է այն դասընթացներից, որոնք նախատեսված են նորադարձ քրիստոնյաների համար: Մենք հավատում ենք, որ այսօր մեծ կարիք կա օգնելու նորադարձ քրիստոնյաներին Քրիստոսի ուսմունքը գործնականորեն կիրառելու իրենց կյանքում: Դասընթացները կարող են օգտակար լինել նաև եկեղեցու երիտասարդների և մեծահասակների ծառայության մեջ, ովքեր ուզում են քրիստոնեությունն իրենց ամենօրյա կյանքի առավել գործնական մասը դարձնել:

Այս դասընթացի և ամբողջ՝ *Խմբային ուսուցումներ նոր քրիստոնյաների համար*-ի հիմնական նպատակն է՝ նորադարձ քրիստոնյաներին ներկայացնել նշանակալի, կյանքին վերաբերող հարցեր: Մենք չենք փորձում ներկայացնել այդ թեմաների սպառիչ ուսումնասիրությունները:

Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի ուսումնական ծրագրի կոմիտեն ծրագրավորում է շարունակել վերանայել այս դասերը: Մենք պատրաստ ենք ընդունել այս նյութերի զարգացման վերաբերյալ ձեր ունեցած ցանկացած քննադատություն կամ միտք:

Ինչպես օգտագործել Ուսուցչի ձեռնարկը

1. Դասերի ծրագրեր ուսուցչի համար

Այս բաժնի առաջին էջն ընդհանուր պատկերացում է տալիս ողջ դասընթացի վերաբերյալ:

Հաջորդ էջը *Դասարանական Հանձնարարության Յուցակ -ի* մի օրինակ է: Այն ցույց է տալիս, թե երբ պետք է Ուսուցման ուղեցույցի յուրաքանչյուր նախագիծ լրացվի և երբ յուրաքանչյուր հարցաշար և ստուգարք տրվի: Ուսուցման ուղեցույցներն արդեն ունեն այս ձևի չլրացված բլանկները հետևի կազմի ներսի կողմում:

Հաջորդը կլինի դասերի ծրագրերը յուրաքանչյուր դասի համար: Այս բոլոր դասերի ծրագրերն ունեն Աստվածաշնչյան Բանալի ճշմարտություն և Բանալի համար: Դրանք կարող են տրվել դասի սկզբում: Դրանք նաև օգնում են քննարկումը պահել հիմնական թեմայի վրա ողջ դասի ընթացքում:

Ներքևում կան Աստվածաշնչյան Բանալի ճշմարտության և Բանալի համարի մի քանի մեկնաբանություններ՝ թե ինչպես սովորեցնել դասը: Շատ դեպքերում հղումներ են արվում Ուսանողի ձեռնարկին կամ Ուսուցման ուղեցույցի նախագծերին:

Յուրաքանչյուր դաս ամփոփվում է «անձնական կիրառություն» քայլով: Սրա կարևորությունը չի կարող գերագնահատվել: Նորադարձ քրիստոնյաները կարիք ունեն հստակ առաջնորդություն ստանալու, թե ինչպես այս աստվածաշնչյան ուսուցումները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում: Համոզվա՛ծ

եղեք, որ բավականաչափ ժամանակ եք տալիս ձեր ուսանողներին, որպեսզի սկսեն այս անձնական կիրառման ընթացքը:

Յուրաքանչյուր դասի ծրագրի վերջում ուսանողի համար կա հանձնարարությունների ցուցակ:

Այս դասընթացներից շատերը նախատեսված են հինգ դասերի համար՝ յուրաքանչյուրը մեկ ժամ տևողությամբ: Այս բոլոր 14 դասընթացները կարելի է ավարտել 3-4 ամիսների ընթացքում, եթե դուք շաբաթական հինգ օր դասեր ունենաք: Եթե դուք ունենաք շաբաթական մեկ ժամ, ապա մեկ դասընթացը կարող եք ավարտել մեկ ամսում, իսկ ամբողջ շարքը՝ մոտ մեկ տարում: Այս դասերից շատերը հեշտությամբ կարելի է անցկացնել ավելի երկար ժամանակահատվածում կամ վերածել ավելի շատ դասերի:

2. Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը կարող է ծառայել երկու նպատակների: Դուք կարող եք հանձնարարել ուսանողներին՝ կարդալ համապատասխան էջերը՝ տրված դասին նախապատրաստվելու համար: Կամ էլ կարող եք հանձնարարել նրանց՝ այն կարդալ դասը անցկացնելուց հետո՝ վերանայելու և ամրացնելու այն, ինչ ուսուցանվեց դասարանում:

Մենք քաջալերում ենք, որ դուք ուսանողներին հանձնարարեք նշումներ անել դասարանում, չնայած այն բանին, որ նրանց տալիս եք Ուսանողի ձեռնարկը: Նրանց անձնական նշումները և դասարանական քննարկումները կօգնեն պարզաբանել Ուսանողի ձեռնարկի որոշ թեմաներ:

3. Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցի նախագծերը նախատեսված են ուսանողներին դասասենյակից դուրս աշխատանքով ապահովելու համար: Որոշ նախագծեր կօգնեն ուսանողներին նախապատրաստվել հաջորդ քննարկմանը:

Նախագծերից շատերը նախատեսված են օգնելու ուսանողներին՝ ավելի խորը նայել դասարանում քննարկված որոշ թեմաներ: Այս հանձնարարությունների հիմնական նպատակն է՝ օգնել ուսանողներին բացահայտել, թե ինչպես աստվածաշնչյան ճշմարտությունները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում:

4. Ուսանողի ստուգարք և Ստուգարքի պատասխաններ

Ստուգարքները նախատեսված են պարզ կերպով գնահատելու յուրաքանչյուր ուսանողի առաջընթացը՝ դասընթացի ընթացքում անցած աստվածաշնչյան ճշմարտությունները հասկանալու հարցում: Ստուգարքի պատասխանները գտնվում են այս Ուսուցման ձեռնարկի՝ ուսանողի ստուգարքի նմուշի վերջին էջից անմիջապես հետո:

5. Դասընթացի վկայական

Դասընթացի վկայականը որպես գնահատանք պետք է տրվի նրանց, ովքեր կավարտեն դասընթացի համար պահանջվելիք ամբողջ աշխատանքը և բարեհաջող կհանձնեն ստուգարքը: Դասընթացի վկայականը գտնվում է Ուսուցչի ձեռնարկի վերջին էջում: Ավարտական վկայական կարող է տրվել նաև այն ուսանողներին, ովքեր կավարտեն *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի բոլոր 14 դասընթացների շարքը: Նմուշը ներառված է «Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար» գրքում:

Դասընթացների ակունքները

Սողոմոնն ասաց, որ արևի տակ նոր բան չկա: Նույնը կարելի է ասել նաև այս դասերի մասին: Այս մտքերից շատերը նոր չեն: Մենք ուզում ենք արտահայտել մեր հատուկ գնահատականը *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտին* այն ազդեցության համար, որ նրանք ունեցել են այս նյութերը մշակող մարդկանց վրա: Այս դասերից շատերը կրում են *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտի* հետքերը:

Ես նաև ուզում եմ արտահայտել իմ խորին երախտագիտությունն այն բազմաթիվ ուսուցիչներին ու հազարավոր նորադարձ քրիստոնյաներին, ովքեր օգտագործել են այս նյութերը վերջին մի քանի տարիների ընթացքում: Նրանց տված գաղափարները մեծ դեր են խաղացել այս դասընթացների մշակման մեջ: Ես նաև շատ երախտապարտ եմ Դոն Վիլկերսոնին, որն ինձ հնարավորություն տվեց աշխատել Բրուկլինում (Նյու Յորք) 1971-1975թթ.-ին: Այդ տարիներին էր, որ *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի մշակումն առաջին անգամ սկսվեց:

Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար դասընթացների հինգերորդ խմբագրումը մշակվել է Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի Ուսումնական ծրագրի կոմիտեի օգնությամբ: Հատուկ շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցել են այդ վերանայման գործընթացին:

Այս նյութերը վերատպելու վերաբերյալ մոտեցումը

Ուսուցչի ձեռնարկը, ինչպես նաև ուսանողական մյուս բոլոր նյութերը, որոնք վերաբերում են *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացներին, պաշտպանված են հեղինակային իրավունքով: Այս նյութերը կարող են վերատպվել և բաժանվել օգտագործելու նպատակով Թին Չելենջում, նմանատիպ ծրագրերում, տեղական եկեղեցիներում, դպրոցներում և այլ կազմակերպություններում, ինչպես նաև անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել համացանցում հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Սակայն այս նյութերը չեն կարող վաճառվել, այլ միայն՝ անվճար բաժանվել: Նրանք,

ովքեր ուզում են տպագրել և վաճառել դրանք, պետք է գրավոր թույլտվություն ձեռք բերեն Գլոբալ Թին Չելենջից:

Խորհուրդ է տրվում ուսուցման հետևյալ հերթականությունը

Այս դասընթացը *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* շարքի 14 ուսուցումներից մեկն է: Բոլոր 14 դասընթացները այստեղ ներկայացված են ուսուցման՝ խորհուրդ տրված հերթականությամբ: Հերթականության ցանկը մշակվել է դասընթացների շարունակական ուսուցման համար: Ավելի լավ կլինի այն ձևել 14 ճաղեր ունեցող անիվի նման: Այս դասընթացները կառուցված չեն մեկը մյուսի վրա: Ամեն մեկն առանձին է: Այնպես որ, ուսանողները կարող են միանալ դասերին ցանկացած կետում և շատ հեշտությամբ հարմարվել:

1. Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ
2. Թռուցիկ հայացք Աստվածաշնչին
3. Վերաբերմունքներ
4. Փորձություններ
5. Հաջողակ քրիստոնեական կենսակերպ (ներառում է դասեր Սուրբ Հոգու ծառայության վերաբերյալ)
6. Աճել ձախողումների միջոցով
7. Քրիստոնեական պրակտիկա (շփում Տեղական եկեղեցու հետ)
8. Հնազանդություն Աստծուն
9. Հնազանդություն մարդուն
10. Բարկություն և անձնական իրավունքներ
11. Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը
12. Սեր և ինքնաընդունելություն
13. Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ
14. Հոգևոր զորություն և գերբնականը

Այս դասընթացների ուսուցման նպատակով լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «*Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*» գիրքը:

Դասի ծրագրեր
ուսուցիչների համար

Այս դասերի ծրագրերը օգտագործելու վերաբերյալ տեղեկությունների համար տե՛ս 4-րդ էջը՝ «Ինչպես օգտագործել Ուսուցչի ձեռնարկը»:

Դասի ընդհանուր նկարագրություն

1. Առաջին դասից մեկ կամ երկու օր առաջ դուք կարող եք դասընթացը ներկայացնել ուսանողներին և նրանց տալ առաջին մի քանի հանձնարարությունները: Եթե հնարավոր է, բաժանե՛ք Ուսուցման ուղեցույցը այս դասընթացը սկսելուց մեկ կամ երկու օր առաջ: Բաժանե՛ք Ուսանողի ձեռնարկը և թող ուսանողները կարդան Առաջին գլուխը, որը պետք է քննարկվի առաջին դասի ժամանակ:

   2. Հաջորդ էջի վրա (էջ 11) կա *Դասարանական Հանձնարարության Ցուցակի* մի օրինակ, որտեղ կան ժամկետները, թե երբ պետք է յուրաքանչյուր հանձնարարություն ավարտվի: Թող նրանք լրացնեն համապատասխան ժամկետները՝ օգտագործելով Ուսուցման ուղեցույցի վերջում գտնվող *Դասարանական Հանձնարարության Ցուցակի* դատարկ բլանկը:

3. Տեղեկացրե՛ք ուսանողներին, որ նրանք Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 1-ը և Նախագիծ 2-ը պետք է ավարտած լինեն նախքան առաջին դասին գալը: Դուք կարող եք համառոտ բացատրություն տալ Նախագիծ 2-ի վերաբերյալ: Այս Նախագծի պահանջն այն է, որ նրանք գտնեն այն կարիքը կամ ցանկությունը, որին սատանան մղում է նրանց, որ բավարարեն իրենց կյանքում, երբ հանդիպում են փորձության: (Տե՛ս Նախագիծ 2-ի հարցեր 4-րդ և 5-րդ): Մենք այդ հարցը կքննարկենք առաջին դասի ժամանակ:

   Ասե՛ք նրանց, որ եթե չեն հասկանում, թե ինչ գրեն պատասխանների տեղում, պարզապես թող բաց թողնեն: Նրանք կարող են Նախագիծ 2-ի այդ բաժինը լրացնել առաջին դասի ընթացքում կամ դրանից հետո: Բայց և այնպես, կարիք չկա, որ նրանք լրացնեն առաջին երեք հարցերը Նախագիծ 2-ի բոլոր օրինակներում նախքան առաջին դասը:

4. **Դասը տանել դասասենյակից դուրս:** Մի պարզ ձև, որով կարող եք օգնել ձեր ուսանողներին՝ ամրապնդել յուրաքանչյուր դասի հիմնական ուսուցումները՝ համակարգչի օգնությամբ կամ ձեռքով փոքրիկ սլաքներ դնելով:

   Օրինակ.

   - Փորձության սահմանումը:
   - Փորձությունը հաղթահարելու վեց քայլերը:
   - Ինչպես նախապատրաստվել փորձությանը:
   - Բանալի համարներ, որոնք վերաբերում են փորձությանը.
     Բ Տիմոթեոս 2:22, Սաղմոս 37:4-5, Հակոբոս 4:7-8 և այլն:
   - Կարևոր մտքեր, օրինակ. Որո՞նք են այս փորձությունը զիջելու հետևանքները:

Յուրաքանչյուր դասի վերջում մի ուսուցիչ առաջարկում է այս փոքրիկ սլաքները տալ ցանկացած ուսանողի, ով ցանկություն հայտնի: Ուսանողները սովորաբար դրանք փակցնում են իրենց ննջասենյակների ուսումնական հատվածում կամ նույնիսկ փոխանցում են իրենց ընտանիքներին: Այս ձևով դասի հիմնական ուսուցումները շարունակում են տեսողական հիշեցում լինել ուսանողների և մյուսների համար:

Դասարանական Հանձնարարության Ցուցակ

Դասընթացի անվանումը Փորձություններ

Հարցաշար	Անգիր համարներ	Ամսաթիվ
1	Ա Կորնթացիների 10:13	օր 2-րդ
2	Հակոբոս 4:7-8	օր 3-րդ
3	Փորձությունները հաղթահարելու ձև	օր 4-րդ

Նախագծեր	Ամիս, ամսաթիվ
1	օր 1-ին
2	օր 1-ին
3	օր 2-րդ
4	օր 2-րդ
5	օր 3-րդ
6	օր 3-րդ կամ 4-րդ
7	օր 3-րդ կամ 4-րդ
8	օր 4-րդ

Ստուգարք Ամիս, ամսաթիվ օր 5-րդ

Դաս 1.
Զարգացնել իմ կարիքների գիտակցությունը

1

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես կարիք ունեմ հայտնաբերելու իմ կյանքի կարիքները, որոնք սատանան ինձ փորձում է, որ իր ասած ձևով անեմ:

2. **Բանալի համար՝ Փիլիպպեցիների 4:19:**

«Բայց իմ Աստվածը ձեր բոլոր կարիքները պիտի հոգա Փառքի մեջ՝ Իր ունեցած հարստության չափով՝ Քրիստոս Հիսուսի միջոցով»:

3. **Հղումներ ուսանողների նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի Գլուխ 1-ինը զուգահեռ է գնում այս դասին: Ուսուցման ուղեցույց Նախագիծ 1-ի՝ *«Փորձությունն Աստվածաշնչում»* և Նախագիծ 2-ի՝ *«Տարբերել սեփական փորձությունները»* բաժինները կօգտագործվեն այս դասի ընթացքում:

4. **Դասի ջերմացում (5 րոպե):**

Այս դասը ներկայացնելու համար թող մի քանի ուսանողներ պատասխանեն հետևյալ հարցին.

Մի պահ ձևացրե՛ք, որ դուք Ադամն ու Եվան եք Եդեմի պարտեզում: Դուք գիտեք, որ Աստված այդ ծառը դրել է պարտեզում և ասել է, որ դուք չեք կարող ուտել միայն այդ ծառի պտղից: Մենք բոլորս գիտենք, որ Ադամն ու Եվան կերան այդ պտուղը և վռնդվեցին պարտեզից: Եթե դու լինեիր Ադամի ու Եվայի փոխարեն, ինչպե՞ս կվարվեիր այդ ծառի հետ:

5. **Քննարկե՛ք Ա. կետը. Ի՞նչ է փորձությունը (5-10 րոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 4-րդ, 5-րդ):**

Մատնանշե՛ք տարբերությունը կառուցողական փորձության, որը սովորաբար կոչվում է ստուգում, և մեղքի փորձության միջև, որը միշտ ավերիչ է, եթե քրիստոնյան զիջում է դրան: Բերե՛ք մի քանի օրինակներ երկու տեսակի փորձություններից էլ, այնուհետև բացատրե՛ք, որ ամբողջ դասընթացի ընթացքում քննարկվելու է **մեղքի փորձությունը**, այլ ոչ թե կառուցողական փորձությունները կամ ստուգումները:

1

6. **Փորձության պլակատ:**

Պլակա՛տ պատրաստեք փորձության հետևյալ սահմանումով և փակցրե՛ք դասասենյակում այնպես, որ կարողանաք դիմել դրան ողջ դասընթացի ընթացքում: Այս սահմանումը Ուսանողի ձեռնարկի էջ 4-ից է:

Փորձություն

Երբ սատանան փորձում է քեզ մղել՝ խախտելու Աստծո օրենքները՝ քո կյանքում եղած որևէ կարիք կամ ցանկություն բավարարելու համար:

Դուք կարող եք նաև ձեր ուսանողներին խնդրել, որ պլակատ պատրաստեն որոշ ասպարեզների ձևերով, որտեղ սատանան մեզ փորձում է, որ մեղք գործենք: Նրանք կարող են կտրել նկարներ և խոսքեր ամսագրերի կամ թերթերի գովազդներից:

7. **Անցկացրե՛ք Բ. կետը. Ինչքանո՞վ է փորձությունը համընկնում քրիստոնյայի կյանքին:**

Մի քանի րոպե տրամադրե՛ք բացատրելուն, թե ինչ տեղ ունի փորձությունը քրիստոնյայի կյանքում: Նրանք պետք է հասկանան, որ փորձությունը քրիստոնյայի կյանքի լոկ մի մասն է:

Նրանք չպետք է կյանքի ամեն մի իրավիճակ դիտեն որպես մեղքի փորձություն: Որոշ օրեր նրանք կարող են բազմաթիվ փորձությունների հանդիպել, իսկ ուրիշ օրեր ոչ մի փորձություն չունենալ: Որպես աճող քրիստոնյաներ՝ մենք պետք է ամեն օր ավելին անենք, քան փորձությունների դեմ պայքարելը:

8. **Ո՞վ է մեզ փորձում, որ մեղք գործենք (5 րոպե):**

Քննարկե՛ք, թե ով է մեզ փորձում, որ մեղք գործենք: Թող նրանք օգտագործեն Սուրբ Գրքի համարները և պատասխանները, որ գրել էին Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 1-ի *Փորձություն* բաժնի 1-ին և 2-րդ հարցերի վերաբերյալ:

1. **Աստված մարդկանց ենթարկո՞ւմ է մեղքի փորձության (Հակոբոս 1:13):**
2. **Ո՞վ է մարդկանց ենթարկում մեղքի փորձության (Ո՞վ փորձեց Հիսուսին, որ Նա մեղք գործի): Կարդա՛ Մատթեոս 4:1-11:**

9. Անցկացրե՛ք Գ. կետը. Սատանա՞ն է քեզ ստիպում դա անել: (3-5 բոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 6-րդ, 7-րդ)

Շեշտե՛ք անձնական պատասխանատվության կարևորությունը որոշումներ կայացնելու հարցում, թե ինչպես պետք է բավարարեն իրենց կարիքներն ու ցանկությունները կյանքում:

Դուք կարող եք օգտագործել Ուսանողի ձեռնարկի 6-րդ, 7-րդ էջում տրված օրինակը «դռների» համեմատության վերաբերյալ, որոնք Աստված և սատանան դնում են ձեր առաջ: Բերե՛ք մի քանի օրինակներ տարբեր «դռների» վերաբերյալ, որոնք Աստված և սատանան կարող են դնել ձեր ուսանողների առաջ՝ նրանց ունեցած որևէ կարիքի բավարարման համար:

10. Ինչպե՞ս է սատանան փորձում ձեզ (3-5 բոպե):

Նշե՛ք, որ սատանան դժվար թե գա և ձեզ ասի. «Բարև՛, ես սատանան եմ, ես հիմա փորձում եմ քեզ, որ մեղք գործես»: Նա ձեզ մոտենում է այն մտքով, որ իբր գալիս է օգնելու, որ բավարարեք ձեր կյանքում եղած կարիքը: «Դուք կարիք ունեք: Դուք լավ շորի կարիք ունեք: Ահա՛ հեշտ ձև դրանք ձեռք բերելու: Գողացե՛ք դրանք, քանի դեռ վաճառողը խոսում է մեկ ուրիշի հետ»:

11. Հիսուսի փորձությունները (10-15 բոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 11):

Քննարկե՛ք Հիսուսին հանդիպած երեք փորձությունները և կարիքը, որ սատանան Նրան առաջարկում էր հագեցնել Իր կյանքում:
Տես Մատթեոս 4:1-11: Թող ուսանողներն իրենց պատասխանների համար դիմեն Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 1-ի 7-րդ հարցին:

Երբ Հիսուսը փորձվեց, որ մեղք գործի

Սատանան երեք փորձություններ բերեց, որպեսզի Հիսուսն Իր կյանքում տարբեր կարիքներ և ցանկություններ զգա:

1-ին փորձություն. քարերը հաց դարձնել: Մատթեոս 4:3-4:

Կարիք. Հիսուսը ֆիզիկապես սոված էր: Նա սննդի կարիք ուներ:

Ցանկություն. Ապացուցի՛ր, որ Դու ունես զորություն՝ բավարարելու այս կարիքը Քո կյանքում: Ապացուցի՛ր, որ Դու կարող ես հրաշք գործել:

2-րդ փորձություն. թռչել տաճարի գագաթից: Մատթեոս 4:5-7:

Ցանկություն. Ապացուցի՛ր, որ Դու վստահում ես Աստծուն:

Ցանկություն. Ապացուցի՛ր, որ Աստված Քեզ կպահի:

1

3-րդ փորձություն. սատանան Հիսուսին առաջարկում է ամբողջ աշխարհի ղեկավարումը: Մատթեոս 4:8-10:

Ամբողջ աշխարհի թագավորությունները ցույց տալով՝ սատանան այդ ամենն առաջարկում է Հիսուսին, եթե միայն Նա խոնարհվի և երկրպագի իրեն:

Ցանկություն. աշխարհին հաղթելու և նվաճելու Իր նպատակը հեշտ ձևով կատարել՝ ի տարբերություն Աստծո ասած ձևի, որը վերջնական արդյունքում Հիսուսին պետք է տաներ խաչի տառապալից մահվան:

Ուսանողի ձեռնարկ, էջ 11

12. Անցկացրե՛ք Դ. կետը. Ինչքանո՞վ են քո կյանքի կարիքները համընկնում փորձությունների հետ (5-15 րոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 8-9):

Համոզվե՛ք, որ ձեր ուսանողները սկսում են հասկանալ փորձության և կարիքի միջև եղած տարբերությունը: Կարիքն իրական բան է: Եթե մի մարդ հաց չի կերել, նա ուտելիքի ֆիզիկական կարիք ունի: Ուտելիք գողանալու սատանայի փորձությունն այդ կարիքը բավարարելու ձևերից մեկն է: Յուրաքանչյուր փորձություն կապված է ձեր ունեցած որևէ կարիքի կամ ցանկության հետ: Երբեմն դուք կարող եք տեղյակ չլինել ձեր կարիքի մասին:

Հիմա, հնարավոր է, ճիշտ ժամանակն է՝ քննարկելու Ուսանողի ձեռնարկի 8-րդ և 9-րդ էջերի վրա գտնվող ցանկությունների ցուցակը: Մատնանշե՛ք, որ մենք բոլորս ունենք այս կարիքները: Բերե՛ք կոնկրետ փորձությունների ու կարիքների մի քանի օրինակներ: Ներկայացրե՛ք, թե ինչպես Աստված կօգնի ձեր ուսանողներին՝ բավարարելու այս կարիքներն իրենց կյանքում: Սատանան նույնպես կփորձի «օգնել» նրանց, որպեսզի բավարարեն իրենց այս կարիքները:

13. Անցկացրե՛ք Ե. կետը. Ինչքանո՞վ են քո ցանկությունները համընկնում փորձությունների հետ (5-10 րոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 10-13):

Օգնե՛ք ձեր ուսանողներին տեսնել, որ բոլոր փորձությունները չէ, որ կապ ունեն իրենց կյանքի որևէ կարիքի հետ: Որոշ փորձություններ ուղղված են ցանկություններին: Դրանցից որոշները կարող են շատ ճիշտ ցանկություններ լինել. հեղինակությունը պաշտպանելու ցանկություն, մի զույգ նոր կոշիկ և այլն:

Կան նաև մեղսալից ցանկություններ. եսասիրական, ուրիշների համար վնասակար, օրինակ՝ վրեժխնդրությունը: Հեշտ ձևը ասելու, թե արդյո՞ք տվյալ ցանկությունը մեղսալից է, դիտարկելն է, թե ինչ տեղի կունենա, եթե դուք

հետևեք այդ ցանկությանը: Եթե գործողությունը մեղսալից է, ապա, ամենայն հավանականությամբ, ցանկությունը նույնպես մեղսալից է:

Օրինակ, եթե դուք ուզում եք սեռական հարաբերություն ունենալ մի անձնավորության հետ, ով արդեն ամուսնացած է, ապա դա մեղսալից ցանկություն է: Հակառակ սեռի հետ սեռական հարաբերություն ունենալը մեղսալից ցանկություն չէ: Բայց երբ մենք այդ ցանկությունը կենտրոնացնում ենք մի անձնավորության վրա, ով արդեն ամուսնացած է, ապա դա այդ ցանկության սխալ կիրառումն է:

Եթե դուք ամուսնացած եք, ապա ձեր կողակցի հետ սեռական հարաբերություն ունենալը մեղսալից ցանկություն չէ: Սակայն, եթե դուք ամուսնացած եք, ձեզ համար մեղսալից է որևէ այլ անձնավորության հետ սեռական հարաբերություն ունենալու ցանկությունը:

Չամուսնացած անձնավորության համար բնական է հակառակ սեռի հետ սեռական հարաբերություն ունենալու ցանկությունը: Բայց և այնպես, Աստվածաշունչը շատ հստակ ասում է, որ այդ ցանկությանը հետևելը և ամուսնությունից առաջ որևէ այլ անձնավորության հետ սեռական հարաբերություն ունենալը խախտում է Աստծո օրենքը:

Երկու համարներ շատ օգտակար են այս քննարկման համար:

Բ Տիմոթեոս 2:22

«Երիտասարդական ցանկություններից էլ փախի՛ր ու գնա՛ արդարության, հավատի, սիրո, խաղաղության հետևից՝ նրանց հետ, ովքեր Տիրոջ անունը կանչում են մաքուր սրտով»:

Աստված հստակեցնում է, որ մենք չպետք է գրկաբաց ընդունենք ցանկացած ցանկություն որպես լավ՝ լոկ այն պատճառով, որ այդ ցանկությունն առաջացել է մեր սրտում: Մեր մշակույթը քաջալերում է մարդկանց՝ հետևելու իրենց ցանկություններին: Աստված հստակեցնում է, որ որոշ ցանկությունների չպետք է հետևենք: Սակայն Աստված չի ասում՝ պարզապես անտեսել այդ ցանկությունները: Նա մեզ ասում է՝ «փախչել չար ցանկություններից» և գնալ «արդարության, հավատի, սիրո, խաղաղության հետևից նրանց հետ, ովքեր Տիրոջ անունը կանչում են մաքուր սրտով»:

Բ Կորնթացիների 10:5

«Խորտակելով առարկություններն ու Աստծո գիտության դեմ գոռոզացած ամեն մի բարձր բան, և ամեն մի միտք գերելով՝ հնազանդեցնում ենք Քրիստոսին»:

Այստեղ Աստծո Խոսքը մեզ հստակ ձևակերպում է տալիս, թե ինչպես մենք պետք է վարվենք ցանկացած ցանկության հետ, անկախ նրանից, թե ինչ տեսակի ցանկություն է դա: Եթե այդ ցանկությունը հակառակ է գնում Աստծո

1

Խոսքի ուսուցմանը, մենք պետք է ոչնչացնենք այն մեր կյանքում: Երկրորդ կետն այն է, որ մենք պետք է գերի վերցնենք ցանկացած միտք ու ցանկություն և այն հնազանդեցնենք Քրիստոսին:

Չվերահսկվող ցանկությունները մեզ հաստատ կտանեն գործողությունների, որոնք խնդիրներ կստեղծեն մեր կյանքում: Չվերահսկվող ցանկությունները հեշտությամբ կարող են մեզ տանել մեղսալից գործողությունների: Աստծո Խոսքը հստակեցնում է, որ մենք պատասխանատվություն և կարողություն ունենք որոշումներ կայացնելու, թե ինչպես պատասխանել մեր կյանքի յուրաքանչյուր ցանկության: Աստված մեզ կտա հարկ եղած զորությունը՝ այդ ցանկություններին պատասխանել Նրան փառք բերող ձևով:

Նշե՛ք, որ սատանան ուզում է, որ մենք կրքով ընդունենք մեր ցանկությունները. եթե լավ է թվում, ուրեմն արա՛ դա: Աստված ուզում է, որ մենք գնահատենք մեր ցանկությունները, նախ և առաջ հաշվի առնենք, թե ինչ հետևանքներ կունենա ցանկություններին ուղիղ համեմատ վարվելը: Եթե այդ գործողությունը կտանի մեղքի, Աստծո Խոսքը հստակեցնում է, որ մենք պետք է փախչենք այդ ցանկությունից, ոչնչացնենք այդ ցանկությունը, կամ այն գերի դարձնենք ու հնազանդեցնենք Քրիստոսին:

14. Հասկանալ կարիքների ու ցանկությունների միջև եղած տարբերությունը (3-5 բոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 8-13):

Շատ ուսանողներ դժվարանում են հասկանալ կարիքների ու ցանկությունների միջև եղած տարբերությունը: Նայե՛ք Ուսանողի ձեռնարկի 8-րդ էջի կարիքների ցուցակը և ընտրե՛ք մի քանի կարիքներ, և թող ուսանողները դրանցից յուրաքանչյուրի համար կարիքների և ցանկությունների օրինակներ բերեն:

Օրինակ, դուք ուտելիքի ***կարիք*** ունեք, սակայն, հնարավոր է՝ ***ցանկանաք*** մի մեծ բաժին շոկոլադե տաք քաղցրավենիք:

Ձմռանը դուք վերարկուի ***կարիք*** ունեք, հատկապես, երբ դրսում ձյուն է գալիս: Բայց, հնարավոր է՝ ***ցանկանաք*** երկար կաշվե վերարկու ունենալ:

Դուք ***կարիք*** ունեք ընկերներ ունենալու, բայց, հնարավոր է՝ ***ցանկանաք*** կոնկրետ մարդու, որ նա՛ լինի ձեր ընկերը, հատկապես, եթե հարուստ է կամ շատ լավ արտաքին ունի:

Ձեր ուսանողների համար կարող է օգտակար լինել կարիքների ու ցանկությունների սահմանումներ գրելը: Խնդրե՛ք նրանց՝ արտահայտվել, թե ինչեր պետք է ներառված լինեն այս սահմանումների մեջ: Դուք կարող եք այդ սահմանումներով պլակատ պատրաստել և կախել դասասենյակում, որպեսզի կարողանաք դիմել դրան ողջ դասընթացի ընթացքում: Ահա՛ մի քանի հնարավոր սահմանումներ.

Կարիք. դա մենք պետք է ունենանք լիարժեք կյանքի և գոյատևման համար:

Ցանկություն. դա մենք ուզում ենք ունենալ, սակայն ունենալն անհրաժեշտ չէ:

Այս երկու բառերի սահմանումները գրելուց հետո, դուք կարող եք ժամանակ տալ, որպեսզի ուսանողները կարիքների և ցանկությունների ցուցակներ գրեն: Փակցրե՛ք նրանց օրինակները համապատասխան վերնագրերի տակ: Դուք կարող եք այս ցուցակները գրել մեծ թղթերի վրա և կախել դասասենյակում, որպեսզի դիմեք դրանց դասընթացի ժամանակ: Եթե գտնեք, որ օգտակար է, ապա դասընթացի մնացած ժամանակահատվածում ուսուցանելիս կարող եք շարունակել այդ ցուցակներին լրացուցիչ օրինակներ ավելացնել:

15. Ինչպե՞ս է սատանան կառչում քո կարիքներին ու ցանկություններին (5-10 րոպե):

Նշե՛ք, որ մի փորձության միջոցով սատանան կարող է փորձել «օգնել» քեզ՝ բավարարելու քո երկու կամ երեք ցանկություններ և/կամ կարիքներ: Օրինակ, սատանայի կողմից Հիսուսի առաջին փորձությունն ուղղված էր ուտելիքի հարցում Հիսուսի կարիքին: Սատանան նաև փորձում էր Հիսուսին հավատացնել, որ Նա կարիք ունի ապացուցելու, որ Աստծո Որդին է: Սատանան փորձում էր Հիսուսի մեջ այդ փաստն ապացուցելու ցանկություն առաջացնել:

Սատանան կուզենա ձեզ համոզել, որ տվյալ ցանկությունն իրականում կարիք է ձեր կյանքում: «Դու իրականում այդ նոր կաշվե վերարկուի կարիքն ունես, կամ այդ նոր մեքենայի, այլապես քո ընկերները չեն ընդունի քեզ»:

Մեկ այլ տարբերակը, որով սատանան ձեզ փորձում է հեռացնել ձեզ համար ունեցած՝ Աստծո ծրագրից, այն է, որ ձեզ դրդի այնպիսի կարիքի կամ ցանկության պահանջի, որն Աստծո ժամկետի հետ չի համընկնում: «Անմիջապես բավարարելը» շատ տարածված է այն մարդկանց կյանքում, ովքեր կախյալ վիճակի մեջ են եղել: Սակայն դա հեշտությամբ կարող է խնդիր դառնալ ցանկացած մարդու կյանքում:

«Անմիջապես բավարարելը» կարող է լինել մի փորձություն, որ կապված է կարիքի հետ՝ ինչպես Հիսուսին հանդիպած առաջին փորձության ժամանակ Մատթեոս 4:2-4-ում:

16. Ինչպե՞ս սատանան փորձեց Եվային (5-10 րոպե):

Դուք կարող եք ուսանողներին հանձնարարել՝ քննարկել այն կարիքները (իրականում՝ ցանկությունները), որոնք, ըստ սատանայի, Եվան կբավարարեր, եթե ուտեր Եդեմի պարտեզի այդ ծառի պտղից: Թող նրանք կարդան Ծննդոց 3-ը և գտնեն այն ճշգրիտ ձևը, որից, ըստ սատանայի, Եվան կօգտվեր, եթե աներ նրա ասածը:

1

17. Մի հայացք մեր փորձություններին (5-15 րոպե):

Բերե՛ք փորձությունների մի քանի օրինակներ, որոնց դուք և/կամ ձեր ուսանողները հանդիպել եք վերջերս: Թող ուսանողները բերեն Ուսուցման ուղեցույց Նախագիծ 2-ի՝ *«Տարբերել սեփական փորձությունները»* բաժնում գրած օրինակներից մի քանիսը: Քննարկե՛ք այն կարիքներն ու ցանկությունները, որոնցով սատանան փորձել էր տվյալ անձնավորությանը՝ դրանք իր ասած ձևով բավարարելու համար: Դուք կարող եք նաև պարզաբանել, թե Աստծո ո՛ր օրենքները խախտած կլինեիք, եթե ձեր կարիքը բավարարեիք սատանայի ասած ձևով:

18. Անձնական կիրառություն (5-10 րոպե):

Անձնական կիրառությունը կենտրոնացրե՛ք այն բանի վրա, թե ինչպես տարբերել այն կարիքները և/կամ ցանկությունները, որոնցով սատանան ձեզ փորձում է բավարարություն տալ՝ դրդելով, որ մեղք գործեք: Թող ձեր ուսանողները լրացնեն 3-րդ և 4-րդ հարցերի պատասխաններն այն օրինակների մեջ, որոնք նրանք գրել են Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 2-ում: Դուք կարող եք ձեր ուսանողներին հանձնարարել՝ սկզբում ինքնուրույն աշխատել այս հարցերին պատասխանելիս: Այնուհետև թող նրանք բաժանվեն 3 կամ 4 հոգանոց խմբերի և քննարկեն իրենց պատասխանները:

19. Հանձնարարություններ:

Ա. Գնահատական դրեք Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 1-ի՝ *« Փորձություն Աստվածաշնչում »* բաժնի համար:

Բ. Ստուգե՛ք, թե արդյո՞ք նրանք լրացրել են Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 2-ի՝ *« Տարբերել սեփական փորձությունները »* բաժինը: Նրանք կարիք կունենան Նախագիծ 2-ի, որպեսզի ի վիճակի լինեն լրացնել Նախագիծ 5-ը, որը համապատասխանում է երրորդ դասին: Դուք կարող եք ստուգել Նախագիծ 2-ը և հաջորդ դասին այն վերադարձնել նրանց:

Գ. Բացատրե՛ք Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 4-ի՝ *«Ինչպե՞ս էին Աստվածաշնչի հերոսները հաղթահարում իրենց փորձությունները»* բաժինը: Դրան նայելով՝ դուք կարող եք տեսնել, որ ուսանողներն ունեն ընտրության տարբեր հնարավորություններ: Ինչ-որ ձևով դուք կարող եք համոզվել, թե արդյո՞ք բոլոր ուսանողները նույն պատասխանը չեն ընտրել, հատկապես, եթե դուք ուզում եք դրանք օգտագործել հաջորդ դասի քննարկման ժամանակ: Տե՛ս Դասի ծրագիր 2-ի կետ 4-ը այս՝ Ուսուցչի ձեռնարկի 22-րդ էջի վրա:

Դ. Բացատրե՛ք, որ Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 3-ի՝ *« Իմ կարիքները և ցանկությունները »* բաժինը նախատեսված է գնահատելու այն դասը, որը մենք հենց նոր վերջացրինք: Նրանք ազատ կարող են օգտագործել իրենց դասարանային նշումները և Ուսանողի ձեռնարկը, որպեսզի լրացնեն իրենց աշխատանքն այս Նախագծի մեջ: Դուք պետք է որոշեք, թե ինչ եք ուզում, որ նրանք անեն Նախագիծ 2-րդի՝ *«Հարցեր հետագա ուսումնասիրության համար»* բաժինն ուսումնասիրելիս: Միգուցե դուք ուզենաք, որ նրանք դուրս գրեն այդ հարցերի պատասխաններն առաձին թղթի վրա և հանձնեն ձեզ՝ գնահատելու համար:

Ե. Հանձնարարե՛ք ուսանողներին՝ կարդալ Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը՝ հաջորդ դասին նախապատրաստվելու համար:

20. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրե՛ք ձեր մտքերը այս դասը բարելավելու նպատակով:
Ո՞ր մասերն են լավագույնս գործել:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվար հասկանալի:
Ի՞նչը, ձեր կարծիքով, ամենաօգտավետը եղավ ձեր ուսանողների համար:

Դաս 2.
Հաղթահարել փորձությունները:

2

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես կարիք ունեմ անգիր անելու և օգտագործելու Աստվածաշնչյան օրինակներ՝ փորձություններին պատասխանելու համար:

2. **Բանալի համար. Եփեսացիների 6:13:**

Օգտագործե՛ք Աստծո սպառազինության ամեն մի զենքը, որպեսզի չար ժամանակներում դիմադրեք հակառակորդին և պայքարից հետո հաստատուն կանգնեք:

3. **Հղում ուսանողի նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը գնում է զուգահեռ այս դասին: Ուսուցման ուղեցույց Նախագիծ 4-ի՝ *« Ինչպե՞ս էին Աստվածաշնչի հերոսները հաղթահարում իրենց փորձությունները »* բաժինը նույնպես կօգտագործվի այս դասի ժամանակ:

4. **Դասի ջերմացում. «Որտե՞ղ ես դու կանգնած» (5-10 րոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 14):**

Դասը սկսե՛ք՝ քննարկելով այն հարցը, որ բարձրացված է Ուսանողի ձեռնարկի էջ 14, Ա. կետի՝ *«Որտե՞ղ ես դու կանգնած»* բաժնում: Գրատախտակի վրա նկարե՛ք պարիսպ կամ ցանկապատ՝ որպես խորհրդանշական ձև, որին հանդիպում է յուրաքանչյուր քրիստոնյա: Գրատախտակի մի կողմում գրե՛ք. «*Ամբողջությամբ նվիրված՝ հետևելու Աստծո ասած ձևին*»: Գրատախտակի մյուս կողմում գրե՛ք. «*Ամբողջությամբ նվիրված՝ հետևելու սատանայի ասած ձևին*»:

Այժմ այդ նկարի վրա դրե՛ք աստվածաշնչյան մի քանի հայտնի հերոսների նկարներ: Դուք կարող եք հանձնարարել ուսանողներին՝ տեղադրել այն մարդկանց նկարները, որոնց մասին նրանք ուսումնասիրել են Ուսուցման ուղեցույց Նախագիծ 4-ն անելիս: Հին Կտակարանի հերոսներ Հովսեփի, Դանիելի ու նրա երեք ընկերների նկարները պետք է տեղադրվեն այն կողմի վրա, որտեղ գրված է. «*Ամբողջությամբ նվիրված՝ հետևելու Աստծո ասած ձևին*»:

Հին Կտակարանում նշված Հեզաբելի ու Աքաբի նկարները պետք է տեղադրվեն մյուս կողմում: Հուդա Իսկարիովտացուն, հավանաբար, պետք է տեղադրել ցանկապատի վրա՝ մի փոքր թեքությամբ դեպի սատանայի կողմը:

Պետրոսը, որ Հիսուսի խաչելության ժամանակ թեքվել էր սատանայի կողմը, հետո, սակայն, ապաշխարեց և թեքվեց Աստծո կողմը:

Մատնանշե՛ք, որ նրանք չեն կարող ամբողջ կյանքում քայլել ցանկապատի վրայով: Յուրաքանչյուր քրիստոնյա պետք է որոշում կայացնի՝ հետևելու կա՛մ Աստծուն, կա՛մ սատանային: Շեշտադրե՛ք այս որոշման կարևորությունը կապված այն բանի հետ, թե արդյո՞ք նրանք կլինեն հաջողակ մեղքի փորձությունները հաղթահարելու մեջ:

5. Ինչպե՞ս էին աստվածաշնչյան հերոսները հանդիպում փորձությունների (10-15 րոպե):

Քննարկե՛ք աստվածաշնչյան տարբեր օրինակներ, որոնք գտնվում են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-ում: Ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչպես էին նրանք դիմադրում իրենց հանդիպած փորձություններին: Փորձե՛ք կողմնորոշվել, թե ինչո՛ւ էր նրանցից ինչ-որ մեկը ձախողվում, երբ զիջում էր փորձությանը:

6. Անցկացրե՛ք Գ. կետը. Որո՞նք են փորձությունները հաղթահարելու քայլերը (10-15 րոպե, Ուսանողի ձեռնարկ, էջեր 16-21):

Հիմա արագ ներկայացրե՛ք փորձությունները հաղթահարելու վեց քայլերը: Մատնանշե՛ք, որ սա մի ձև է, որը նրանք կարող են օգտագործել մեղքի փորձությանը պատասխանելու համար:

Փորձությունը հաղթահարելու 6 քայլեր

1. Գիտակցի՛ր, որ փորձության մեջ ես:
2. Ասա՛ «ո՛չ» փորձությանը:
3. Սկսի՛ր խոսել Աստծո հետ:
4. Հարցրո՛ւ ինքդ քեզ. «Ի՞նչ կարիք է սատանան փորձում ինձ մղել, որ բավարարեմ»:
5. Փնտրի՛ր այդ փորձությունից դուրս գալու Աստծո ասած ձևը:
6. Նպատակնե՛ր դիր, որոնք քեզ կօգնեն բավարարել քո կարիքներն Աստծո ասած ձևով:

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, էջ 16

Ուսանողի ձեռնարկի 16-րդ էջի ողջ ցուցակը համառոտ ներկայացնելուց հետո բերե՛ք օրինակ, թե ինչպես կարելի է այս ձևն օգտագործել որևէ կոնկրետ փորձության ժամանակ:

2

Այնուհետև հե՛տ գնացեք և քննարկե՛ք ամեն մի կետը մանրամասնորեն: Նայե՛ք Ուսանողի ձեռնարկի 16-21-րդ էջերը՝ ամեն մի քայլի վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար: Փորձե՛ք բերել մի քանի օրինակներ, թե ինչպես նրանք կարող են օգտագործել յուրաքանչյուր կետը տարբեր փորձությունների դեպքում: Դուք կարող եք ձեր ուսանողներին հնարավորություն տալ փորձությունների օրինակներ բերել Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-ում արած աշխատանքից:

7. Տարբերել կարիքները ցանկություններից (5-10 րոպե):

Տարբեր փորձություններ քննարկելիս փորձե՛ք ***փորձությունն*** առանձնացնել ***կարիքից***, որպեսզի նրանք կարողանան տեսնել, թե ինչպես աստվածաշնչյան ձևը կարող է նրանց օգնել՝ հաղթահարել փորձությունը և, միևնույն ժամանակ, հագեցնել այն կարիքը, որից սատանան ուզում է կառչել մեր կյանքում:

Դուք կարող եք նաև մատնանշել, թե Աստծո որ օրենքները նրանք կխախտեին, եթե զիջեին սատանայի փորձությանը:

8. «Եթե ես լինեի Աստված կամ սատանան» գործողություն (10-20 րոպե):

Փոքր խմբերով այս գործողությունը նախատեսված է ուսանողներին օգնել՝ տեսնելու փորձության երկու կողմերը՝ Աստծո կողմը և սատանայի կողմը: Պատճենահանե՛ք կամ համակարգչով հավաքե՛ք նույն ցուցումները տարբեր թղթերի վրա: Դուք պետք է խմբերին տաք փորձությունների միայն մի կողմը: Խումբ Ա-ն պետք է աշխատի փորձությունների միայն՝ **«Եթե ես լինեի Աստված»** կողմում: Մյուս խումբը պետք է աշխատի փորձությունների՝ **«Եթե ես լինեի սատանան»** կողմում:

Որոշե՛ք, թե որ փորձություններն եք դուք առաջինն օգտագործելու ձեր դասարանում: Եթե դասարանը, որտեղ դուք ուսուցանում եք, սովորաբար չի հանդիպում ներքևում նշված փորձություններին, ուրեմն փոխե՛ք այդ օրինակները: Օգտագործե՛ք փորձություններ, որոնց սովորաբար հանդիպում են ձեր դասարանի անդամների մեծ մասը:

Այս գործողության համար դուք կարիք կունենաք դասարանը բաժանելու 2-ից 4 հոգանոց խմբերի: Փորձե՛ք զույգ թվով խմբեր ունենալ (2, 4, 6 և այլն):

Ա. Յուրաքանչյուր խմբին թղթի վրա տվե՛ք ցուցումներ՝ *«Եթե ես լինեի Աստված… կամ սատանան…»* թեմաների վերաբերյալ: Բացատրե՛ք

ցուցումները և հատկացրե՛ք մոտ 5 րոպե աշխատանքն ավարտելու համար:

Բ. Թող յուրաքանչյուր խումբ ասի ամբողջ դասարանին, թե ինչպես նրանք կհամոզեին քրիստոնյաներին՝ զիջել փորձությանը:

Գ. Ասացե՛ք մնացած ուսանողներին, որ իրենց պահեն այնպես, կարծես այդ փորձության մեջ լինեն:

Դ. Մի փորձության երկու կողմերին լսելուց հետո թող ուսանողները քննարկեն, թե որ կողմն էր ավելի համոզիչ՝ Աստծո՞, թե՞ սատանայի: Թող նրանք բացատրեն, թե որ կողմի փաստարկներն էին ավելի համոզիչ և ինչու: Դուք կարող եք նաև քննարկել, թե ինչու որոշ փաստարկներ համոզիչ չէին:

Ե. Դուք կարող եք ուսանողներին առիթ տալ կիսվելու լրացուցիչ մտքերով, թե ինչպես կարելի էր Աստծո կամ սատանայի մոտեցումները բարելավել:

Զ. Քննարկման ժամանակ մատնանշե՛ք, որ և՛ Աստված, և՛ սատանան կարող են փորձել ուշադրություն հրավիրել այն կարիքի կամ ցանկության վրա, որը ներառված է փորձության մեջ:

Եթե ես լինեի Աստված կամ սատանան գործողություն:

1.Ա. Եթե ես լինեի Աստված:

Եթե ես լինեի Աստված, ահա թե ինչպես կհամոզեի քեզ խաբեբայություն չանել քո դպրոցական ստուգարքի ժամանակ:

Ցուցումներ խմբի համար. Գրե՛ք 5-10 գործողություններ, որոնք դուք կասեիք կամ կանեիք այդ անձնավորության հանդեպ՝ փորձելով համոզել նրան՝ հետևել ձեր խորհրդին:

1.Բ. Եթե ես լինեի սատանան:

Եթե ես լինեի սատանան, ահա թե ինչպես կհամոզեի քեզ խաբեբայություն անել քո դպրոցական ստուգարքի ժամանակ:

Ցուցումներ խմբի համար. Գրե՛ք 5-10 գործողություններ, որոնք դուք կասեիք կամ կանեիք այդ անձնավորության հանդեպ՝ փորձելով համոզել նրան՝ հետևել ձեր խորհրդին:

2

2.Ա. Եթե ես լինեի Աստված:

Եթե ես լինեի Աստված, ահա թե ինչպես կհամոզեի քեզ՝ թմրանյութ չծխել քո ընկերներին դուր գալու համար:

Ցուցումներ խմբի համար. Գրե՛ք 5-10 գործողություններ, որոնք դուք կասեիք կամ կանեիք այդ անձնավորության հանդեպ՝ փորձելով համոզել նրան՝ հետևել ձեր խորհրդին:

2.Բ. Եթե ես լինեի սատանան:

Եթե ես լինեի սատանան, ահա թե ինչպես կհամոզեի քեզ՝ թմրանյութ ծխել քո ընկերներին դուր գալու համար:

Ցուցումներ խմբի համար. Գրե՛ք 5-10 գործողություններ, որոնք դուք կասեիք կամ կանեիք այդ անձնավորության հանդեպ՝ փորձելով համոզել նրան՝ հետևել ձեր խորհրդին:

3.Ա. Եթե ես լինեի Աստված:

Եթե ես լինեի Աստված, ես կհամոզեի ձեզ՝ հնազանդվել ձեր ծնողներին:

Ցուցումներ խմբի համար. Գրե՛ք 5-10 գործողություններ, որոնք դուք կասեիք կամ կանեիք այդ անձնավորության հանդեպ՝ փորձելով համոզել նրան՝ հետևել ձեր խորհրդին:

3.Բ. Եթե ես լինեի սատանան:

Եթե ես լինեի սատանան, ահա թե ինչպես ձեզ կհամոզեի՝ չհնազանդվել ձեր ծնողներին:

Ցուցումներ խմբի համար. Գրե՛ք 5-10 գործողություններ, որոնք դուք կասեիք կամ կանեիք այդ անձնավորության հանդեպ՝ փորձելով համոզել նրան՝ հետևել ձեր խորհրդին:

9. Անձնական կիրառություն (5 րոպե):

Այսօրվա անձնական կիրառության համար թող ուսանողներն աշխատեն անգիր սովորել վեց քայլանոց ձևը՝ փորձություններին պատասխանելու համար (Ուսանողի ձեռնարկ, էջ 16): Ասացե՛ք նրանց, թե երբ են հարցաշար ունենալու սրա վերաբերյալ: Նայե՛ք *Դասարանական Հանձնարարության Յուցակը* այս հարցաշարի ամսաթվի համար: Քաջալերե՛ք նրանց՝ այսօրվանից օգտագործել այս ձևը: Ընդգծե՛ք առաջին քայլից սկսելու կարևորությունը: Եթե նրանք դժվարանան հիշել առաջին քայլը, քաջալերե՛ք նրանց, որպեսզի գրեն այն բոլոր փորձությունները, որոնց հանդիպել են այսօր: Սա էլ մի միջոց է ձեր փորձությունների վերաբերյալ ձեր գիտակցության կառուցման համար:

10. Հանձնարարություններ:

Ա. Դասի վերջում տվե՛ք հարցաշար Ա Կորնթացիների 10:13-ի վերաբերյալ:

Ա Կորնթացիների 10:13.

«Դուք ոչ մի այլ փորձության չեք ենթարկվել, բացի դրանից, ինչ հատուկ է մարդուն: Բայց Աստված հավատարիմ է և չի թողնի ձեզ, որ ձեր կարողությունից ավելի փորձվեք, փորձության հետ կտա նաև ազատվելու միջոց, որ կարողանաք այն կրել»:

Բ. Գնահատակա՛ն դրեք Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3-ի՝ *«Իմ կարիքները և ցանկությունները»,* և Նախագիծ 4-ի՝ *«Ինչպե՞ս էին Աստվածաշնչի հերոսները հաղթահարում իրենց փորձությունները»* բաժինների համար:

Գ. Եթե դուք դասի ժամանակ հավաքել եք Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-ի աշխատանքները, այսօր այն վերադարձրե՛ք ուսանողներին: Բացատրիր, թե ինչպես է Նախագիծ 5-ը համընթաց գնում Նախագիծ 2-ի հետ:

Դ. Եթե դուք դեռ որոշում չեք կայացրել, հիշե՛ք, որ պետք է ձեր ուսանողներին տեղյակ պահեք, թե որ նախագծերը նրանք պետք է լրացնեն հաջորդ դասի համար: Եթե դուք ծրագրել եք օգտագործել Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 6-ի՝ *«Օգտագործել նոր պատկերը փորձությանը պատասխանելու համար»,* և Նախագիծ 7-ի՝ *«Անձնական այցելություն Աստվածաշնչի հայտնի անձնավորություններից մեկին»* բաժինները, ապա ասացե՛ք նրանց, որ նրանք ժամանակին լրացնելու աշխատանքներն ունենան:

Ե. Հանձնարարե՛ք ձեր ուսանողներին կարդալ Ուսանողի ձեռնարկի Գլուխ 3-ը՝ հաջորդ դասին նախապատրաստվելու համար:

11. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրե՛ք ձեր մտքերը այս դասը բարելավելու նպատակով:
Ո՞ր մասերն են լավագույնս գործել:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվար հասկանալի:
Ի՞նչը, ձեր կարծիքով, ամենաօգտավետը եղավ ձեր ուսանողների համար:

2

Դաս 3.
Պատրաստվել փորձություններին:

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Որպես քրիստոնյա՝ ես կարիք ունեմ պատրաստվելու, որպեսզի հաղթահարեմ ցանկացած փորձություն:

2. **Բանալի համար. Ա Կորնթացիների 10:13:**

«Դուք ոչ մի այլ փորձության չեք ենթարկվել, բացի նրանից, ինչը հատուկ է մարդուն. բայց Աստված հավատարիմ է և չի թողնի ձեզ, որ ձեր կարողությունից ավելի փորձվեք, փորձության հետ կտա նաև ազատվելու միջոց, որ կարողանաք այն կրել»:

3. **Հղում ուսանողների նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի Գլուխ 3-ը զուգահեռ է գնում այս դասին: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-ի՝ *«Տարբերել սեփական փորձությունները»,* և Նախագիծ 5-ի՝ *«Նոր հայացք հին փորձություններին»* բաժինները նույնպես կարող են օգտագործվել այս դասի ժամանակ:

4. **Ուսուցչի նախապատրաստվելն այս դասին:**

Միգուցե լավագույնը, որ դուք կարող եք անել այս դասին նախապատրաստվելու համար, այն կլինի, որ աշխատեք ուսումնասիրել մեկ կամ երկու փորձություն՝ որպես օրինակ օգտագործելով Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 6-ի՝ «*Օգտագործել նոր պատկերը փորձությանը պատասխանելու համար»,* և Նախագիծ 8-ի՝ *«Նախապատրաստվել փորձությանը»* բաժինները:

5. **Դասի ջերմացում (5 րոպե):**

Դուք կարող եք առիթ տալ մի քանի ուսանողների՝ կիսվելու իրենց փորձառության մասին, թե ինչպես են փորձություններին պատասխանելիս օգտագործել նոր ձևը, որը մենք ներկայացրինք առաջին դասի ժամանակ: Եթե դուք կարծում եք, թե հնարավոր է, որ ձեր ուսանողները չուզենան կիսվել իրենց անձնական պատասխաններով դասի հենց սկզբում, ուրեմն եկե՛ք պատրաստված՝ բերելով մեկ կամ երկու օրինակ ձեր սեփական, կամ նախկին ուսանողների կյանքից:

3

6. Հիմքային հմտություններ փորձությունների հետ ճիշտ վերաբերվելու համար (5 րոպե):

Այստեղ մի քանի րոպե հատկացրե՛ք, որպեսզի ընդգծեք փորձություններին նախապատրաստվելու կարևորությունը: Կան չորս կարևոր հմտություններ, որոնք ձեր ուսանողները պետք է զարգացնեն, եթե ուզում են հաջողակ լինել մեղքի փորձություններին նախապատրաստվելու և հաղթահարելու մեջ:

Ա. Կարողանալ գիտակցել փորձությունը՝ ինչքան հնարավոր է շուտ:

3

Բ. Կարողանալ գնահատել իրավիճակը և կողմնորոշվել, թե ինչ *կարիք* կամ *ցանկություն* է սատանան փորձում նրանց հագեցնել տալ:

Գ. Կարողանալ *հայտնաբերել* իրենց կարիքներն ու ցանկությունները բավարարելու՝ *Աստծո ասած ձևը*, իսկ հետո հետևել դրան:

Դ. Մեկ այլ օգտակար հմտություն է՝ փորձության մեջ կարողանալ գիտակցել Աստծո կամ սատանայի ասած ձևին հետևելու *հետևանքները:*

7. Անցկացրե՛ք Ա. կետը. Մոտեցե՛ք Աստծուն (5-10 րոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 22-24):

Քննարկե՛ք Աստծուն մոտենալու կարևորությունը՝ որպես փորձություններին նախապատրաստվելու հիմնական միջոց: Սա կարող է մարդկանց մղելու մեծ օգնություն լինել, որպեսզի հետևեն Աստծո ասած ձևին: Օգտագործե՛ք սա՝ քրիստոնեական կյանքին աջակցելու և ավելի ընդլայնված դիտարկելու համար:

Փորձությունները կգան ու կգնան մեր ողջ կյանքի ընթացքում: Բայց և այնպես, սա՝ *Աստծուն մոտենալը*, ամենակարևոր կետն է փորձություններին նախապատրաստվելու համար:

Լավ կլինի՝ ընդգծել նաև փոխհարաբերությունների կարևորությունը փորձություններին նախապատրաստվելու և դրանց դեմ պայքարելու հարցում: Սա, այսպես ասած, հոգևոր պատերազմ է, և սատանան ուժեղ թշնամի է: Եթե փորձենք սատանայի փորձությունների դեմ պայքարել մեր սեփական ուժերով, ամեն բան ինքներս անելով՝ մենք հաճախ կպարտվենք: Սակայն երբ մենք բանակի՝ Աստծո բանակի մի մասն ենք կազմում, հաջողությունն ապահովված է:

Մենք կարիք ունենք Աստծո հետ մտերիմ փոխհարաբերություններ ունենալ, որպեսզի պայքարենք փորձությունների դեմ: Բայց մենք կարիք ունենք մտերիմ փոխհարաբերություններ ունենալ նաև մյուս քրիստոնյաների հետ, որոնք կարող են մեզ օգնել, երբ մենք հանդիպենք փորձությունների: Դրանք շատ կարևոր մաս են կազմում առողջ ապրելու համար: Եթե մենք առողջ փոխհարաբերություններ ունենք մյուս քրիստոնյաների հետ, ապա

ավելի լավ հնարավորություններ ունենք մեր կարիքներն Աստծո ասած ձևով բավարարելու և, այդպիսով, մեղքի փորձությունների ուժը թուլացնելու համար:

8. Անցկացրե՛ք Բ. կետը. Բավարարի՛ր քո կարիքներն Աստծո ասած ձևով (10-20 րոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 24-27):

Քննարկե՛ք Բ. կետի՝ *«Բավարարի՛ր քո կարիքներն Աստծո ասած ձևով»* բաժնում բարձրացված հարցերը: Բերե՛ք մի քանի օրինակներ կամ քննարկման հարցեր, որպեսզի օգտագործեք դասարանի քննարկման համար: Դուք կարող եք հնարավորություն տալ ուսանողներին՝ հղում անելու փորձություններից որոշներին, որոնք նրանք գրել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-ի՝ *«Տարբերել սեփական փորձությունները»,* և Նախագիծ 5-ի՝ *«Նոր հայացք հին փորձություններին»* բաժիններում: Ժամանա՛կ հատկացրեք դասարանում ցույց տալու, թե ինչպես նրանք օգտագործեն Աստվածաշունչը՝ հայտնաբերելու համար Աստծո ասած ձևը՝ որոշակի կարիքներ կամ ցանկություններ բավարարելու նպատակով:

Փորձե՛ք օգնել ուսանողներին՝ ուշադրությամբ գնահատել աշխատանքը, որ նրանք արել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-ում, հատկապես՝ յուրաքանչյուր օրինակի 4-րդ և 5-րդ հարցերը: Ստուգե՛ք, թե արդյո՞ք նրանք ճիշտ են գիտակցել իրենց իրական կարիք(ներ)ը և ցանկություն(ներ)ը յուրաքանչյուր փորձության մեջ:

Նրանք պարզապես արտահայտել են սատանային դեմ կանգնելու կարի՞քը, թե՞ ավելի խորն են գնացել և գործ են ունեցել իրենց կյանքում իրական կարիք(ներ)ի և ցանկության (ցանկությունների) հետ, որոնցից կառչել էր սատանան:

Նայե՛ք Ուսանողի ձեռնարկի էջ 8-ը՝ նրանց կյանքի կարիքների մանրամասն ցուցակի համար:

9. Ներկայացրե՛ք Գ. կետը. « Թո՛ւյլ տուր Աստծուն՝ որոշել, թե որ ցանկություններն են ճիշտ » (3-5 րոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 28-31):

Այս կետը ներկայացնելիս համոզվե՛ք, որ նրանք, նախ և առաջ, հասկանում են կարիքի և ցանկության տարբերությունը: Մի քանի օրինակներն այս կետում օգտակար կլինեն:

Դուք կարող եք անդրադառնալ 12-15 կետերին՝ առաջին Դասի ծրագրում (Ուսուցչի ձեռնարկ, էջ 16-19) կարիքի և ցանկության տարբերության վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար: Այս թեմային կրկին անցնելը շատ կարևոր է ձեր ուսանողների համար: Համոզվե՛ք, որ ձեր ուսանողները հասկանում են՝ ինչպես կիրառել այս տեղեկությունն իրենց կյանքի ամենօրյա գործունեության մեջ:

3

1. ենթակետի՝ «Իմացի՛ր՝ ինչ է ուզում Աստված» բաժինն անցնելիս թող ուսանողները հայտնաբերեն, թե որոնք են Աստծո ցանկությունները, որ մենք պետք է ունենանք: Անհրաժեշտության դեպքում նրանց որոշ համարնե՛ր տվեք, որ Սուրբ Գրքում նայեն, եթե ի վիճակի չլինեն շատ մտքեր արտահայտել: Օգտագործե՛ք Ուսանողի ձեռնարկի 28-30 էջերը որոշ համարների համար, որոնք դուք կարող եք այստեղ կիրառել:

10. Անցկացրե՛ք Գ.-2 կետը. «Ազատվե՛ք հին, մեղսալից ցանկություններից» (5-15 րոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 29-30):

3

Թող ուսանողները ցուցակագրեն այն մեղսալից ցանկությունները, որոնցից նրանք կարիք ունեն ազատվելու: Նրանք պետք է դրանք փոխարինեն աստվածային ցանկություններով, եթե ցանկանում են կայունություն ունենալ իրենց քրիստոնեական ընթացքի մեջ:

Դուք կարող եք որոշ ուսանողների առիթ տալ՝ բացատրելու, թե ինչպես են նրանք ազատվել որևէ հին, մեղսալից ցանկությունից:

Ձեր ուսանողներից որոշները, հնարավոր է, վնասվել են իրենց դեմ արված ուրիշների մեղքերից, օրինակ՝ սեռական բռնությունից: Նրանք, հնարավոր է, բարկության ուժեղ զգացողություն ունենան այդ ուրիշների հանդեպ և ուզենան վրեժ լուծել: Ժամանա՛կ հատկացրեք ձեր ուսանողներին՝ բացատրելու, թե ինչպես նրանք կարող են վրեժխնդրության հարցը բերել Աստծո մոտ: Եթե նրանք իրենց սրտում պահեն քենն ու բարկությունը, ապա դա նրանց ավելի կվնասի, քան իրենց վնասած անձնավորությունը:

Բացատրե՛ք նրանց, որ փոխանակ մտածելու՝ ինչպես վրեժ լուծել, թող մտածեն, թե ինչպես կարող են ճշմարիտ ձևով պատասխանել իրենց վնաս տվող մարդուն: Այս հարցը կարող է նաև քննարկվել ըստ Դ. կետի՝ «Որոշ փորձություններ կարող են կանխարգելվել»:

11. Անցկացրե՛ք Գ.-3 կետը. «Աստվածաշնչյան արժեքնե՛ր կիրառիր քո ցանկությունները գնահատելու համար» (5-10 րոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 30-31):

Աստվածաշնչյան արժեքների այս հարցը ձեր ուսանողների համար, հնարավոր է, դժվար լինի հասկանալ՝ կախված նրանց հոգևոր հասունությունից: Օգնե՛ք նրանց՝ հասկանալ, որ որոշ ցանկություններ պետք է անտեսել: Աստծո օգնությամբ մենք կարող ենք ասել. «Ես որոշել եմ այս ցանկությանն առաջնային տեղ չտալ իմ կյանքում»:

12. Անցկացրե՛ք Դ. կետը. «Որոշ փորձություններ կարող են կանխարգելվել» (10-20 րոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 31-34):

«Որոշ փորձություններ կարող են կանխարգելվել» բաժինն անցնելիս համոզվե՛ք, որ ունեք մի քանի հստակ օրինակներ սրա վերաբերյալ: Դուք կարող եք ուսանողներից մի քանիսին հնարավորություն տալ՝ օրինակներ բերել, թե ինչպես են կարողացել որոշ փորձություններ կանխարգելել:

13. Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 8-ի օրինակը (10-20 րոպե):

Նախքան դասի ավարտը դուք կարող եք մի որևէ փորձություն վերցնել և աշխատել Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 8-ի՝ *«Նախապատրաստվել փորձությանը»* բաժնի հիման վրա: Դա նրանց կօգնի հասկանալ, թե ինչպես լրացնեն Նախագծի աշխատանքը, որը նրանք պետք է անեն այդ դասից հետո:

3

14. Անցկացրե՛ք Ե. կետը. « Իմացի՛ր սատանայի ռազմավարությունը » (5-10 րոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 34-35):

Շատ անգամներ քրիստոնյաները շփոթվում են սատանայի օգտագործած ռազմավարությունից: Ժամանա՛կ հատկացրեք սատանայի օգտագործած տարբեր ռազմավարություններ քննարկելու համար: Դրանցից որոշները գրված են Ուսանողի ձեռնարկի 34-35 էջերում: Դուք կարող եք ավելացնել ուրիշներն էլ:

Հստակեցրե՛ք, որ երբ փորձությունը վերադառնում է, դա կարող է ինչ-որ բաների նշան լինել: Օրինակ այն բանի, որ նրանք մոտ չեն Հիսուսին: Օգտագործե՛ք Հակոբոս 4:7-8-ը այս թեմայի համար:

Սակայն կան ժամանակներ, երբ փորձությունները վերադառնում են, և դրանք հոգևոր անկման նշան չեն: Ժամանա՛կ հատկացրեք, որպեսզի քննարկեք Ղուկաս 4:13 և Բ Կորնթացիների 11:14 հատվածները, որոնք կապ ունեն սատանայի բերած փորձությունների հետ:

15. Անձնական կիրառում:

Այս դասի անձնական կիրառումը յուրաքանչյուր ուսանողից կպահանջի վերցնել որևէ կոնկրետ փորձություն և լրացնել Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 8-ի՝ *«Նախապատրաստվել փորձությանը»* բաժինը: Սա նրանք չպետք է անեն դասարանում: Քաջալերե՛ք ուսանողներին, որպեսզի նրանք մեղքի փորձություններին հաղթելիս փորձեն կիրառել այն, ինչ սովորեցին:

16. Հանձնարարություններ:

Ա. Գնահատակա՛ն դրեք Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-ի՝ *«Տարբերել սեփական փորձությունները»,* և Նախագիծ 5-ի՝ *«Նոր հայացք հին փորձություններին»* բաժիններին, եթե դեռ չեք գնահատել դրանք:

Բ. Գնահատակա՛ն դրեք Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 7-ի՝ *«Անձնական այցելություն Աստվածաշնչի հայտնի անձնավորություններից մեկին»* բաժնի համար:

Գ. Դասի վերջում հարցաշա՛ր ներկայացրեք Հակոբոս 4:7-8-ի հիման վրա:

Հակոբոս 4:7-8.

«Ուրեմն հնազանդվեցե՛ք Աստծուն, դիմադրե՛ք սատանային, և նա ձեզանից կփախչի: Աստծուն մոտեցե՛ք, և Նա ձեզ կմոտենա, մաքրեցե՛ք ձեր ձեռքերը, մեղավորնե՛ր, և սրտներդ մաքրեցե՛ք, երկմիտնե՛ր»:

Դ. Հանձնարարե՛ք ձեր ուսանողներին կարդալ Գլուխ 4-ը՝ հաջորդ դասին նախապատրաստվելու համար:

17. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրե՛ք ձեր մտքերը այս դասը բարելավելու նպատակով:
Ո՞ր մասերն են լավագույնս գործել:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվար հասկանալի:
Ի՞նչը, ձեր կարծիքով, ամենաօգտավետը եղավ ձեր ուսանողների համար:

Դաս 4.
Արձագանքել ձախողմանը:

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես կարիք ունեմ սովորելու իմ ձախողումներին այնպես պատասխանել, որ դա ինձ օգնի ավելի մոտենալ Աստծուն:

2. **Բանալի համար. Եբրայեցիների 4:15-16:**

«Որովհետև ոչ թե այնպիսի մի Քահանայապետ ունենք, որ չկարողանա մեր տկարություններին կարեկից լինել, այլ այնպիսին, որ ամեն կետում փորձվեց մեզ նման, սակայն՝ առանց մեղքի: Ուրեմն, համարձակությամբ մոտենանք շնորհաց աթոռին, որպեսզի ողորմություն ընդունենք և շնորհ գտնենք՝ կարիքի ժամանակ մեզ օգնելու»:

3. **Հղում ուսանողների նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի Գլուխ 4-ը զուգահեռ է գնում այս դասի հետ: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-ի՝ *«Ինչպե՞ս էին Աստվածաշնչի հերոսները հաղթահարում իրենց փորձությունները»,* և Նախագիծ 7-ի՝ *«Անձնական այցելություն Աստվածաշնչի հայտնի անձնավորություններից մեկին»* բաժինները կարող են օգտագործվել այս դասին:

4. **Երկու տեսակետ ձախողման վերաբերյալ (5 րոպե):**

Այսօրվա դասի սկզբում մատնանշե՛ք, որ ձախողման մասին խոսելիս չի կարելի գովել այն: Քրիստոնյան, ով աշխատում է հետևել Աստծո ճանապարհին, ցանկացած ժամանակ մեղք չի գործի ու ինքն իրեն ասի. «Դե լա՛վ, բան չկա: Աստված կների, եթե ես Նրան խնդրեմ»: Աստված չի ուզում, որ մենք զիջենք փորձությանը: Մենք պետք է ունենանք նույն վերաբերմունքը, ինչ Աստված ունի:

Բայց, մյուս կողմից, մեզնից շատերը ժամանակ առ ժամանակ զիջում են փորձությանը: Այս դասի նպատակն է՝ դիտարկել մի քանի պատճառներ, թե ինչու ենք մենք ձախողվում, և դրա հետևանքները: Մենք նաև կդիտարկենք, թե ինչպիսին պետք է լինի քրիստոնյայի արձագանքը ձախողմանը:

Փորձությանը զիջելը չի նշանակում, որ մարդն այդ պահին կորցնում է իր փրկությունը: Մեզնից ոչ ոք կատարյալ չէ, սակայն մենք բոլորս կարող ենք ամբողջ ուժով դեմ կանգնել փորձություններին: Երբ մենք ընկնում ենք, պետք է անկեղծ լինենք, ընդունենք դա և ավելի ուժեղանանք, որպեսզի հաջորդ անգամ, երբ հանդիպենք նույն փորձությանը, ավելի ճիշտ վարվենք,:

5. Անցկացրե՛ք Ա. կետը. «Ի՞նչ է լինում, երբ զիջում ես փորձությանը» (10-15 րոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 36-42):

Խնդրե՛ք ուսանողներին, որ հայտնեն իրենց կարծիքները հետևյալ թեմայի վերաբերյալ. «Ի՞նչ է լինում, երբ դու զիջում ես փորձությանը»: Ժամանա՛կ տվեք ուսանողներին՝ բերել մի քանի օրինակներ, թե ինչ հետևանքների են առնչվել նրանք փորձությունը զիջելուց հետո:

Դուք պետք է որոշեք, թե ինչքան ժամանակ հատկացնել այս բաժնում ներկայացված 12 հետևանքներից յուրաքանչյուրին: Բայց և այնպես, հատուկ ուշադրություն պետք է դարձվի Ա-9՝ «Զիջելը տանում է ինքնաարդարացման» ենթակետի վրա: Մեզնից շատերը սովորել են՝ ինչպես արդարացնել իրենց անցած մեղքերը: Հիմա, երբ մենք քրիստոնյա ենք, միանգամից չենք կորցնում այս «ինքնաարդարացման մեխանիզմը»: Իրականում մենք կարող ենք դեռևս հեշտությամբ արդարացնել մեր փոքր մեղքերը: Սա բարձրացնում է մեր մտքերը նորոգելու կարևորությունը և օգնում՝ յուրաքանչյուր փորձության նայել Աստծո տեսակետից:

4

Ենթակետ 9-ը նաև քննարկում է «մեր սրտերը կարծրացնելու» թեման: Զգուշորեն բացատրե՛ք, թե ինչքան հեշտ է կարծրացնել մեր սիրտը, եթե մենք մերժում և անտեսում ենք, երբ Աստված մեզ հանդիմանում է մեր մեղքերի համար: Շատ հեշտ է լինում կարծրացնել մեր սիրտը, երբ մենք թույլ ենք տալիս պատճառաբանությանը՝ աճել մեր կյանքում:

Ժամանա՛կ հատկացրեք նաև դիտարկելու այն հետևանքները, որ տեղի ունեցան Աստվածաշնչյան պատմությունների մեջ Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-ում և 7-ում: Ընտրե՛ք մի քանիսը, որոնք, ձեր կարծիքով, ամենաօգտակարը կլինեն ձեր ուսանողների համար:

6. Անցկացրե՛ք Բ. կետը. «Ինչու՞ են մարդիկ զիջում փորձությանը» (5-10 րոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 42-46):

Օգտագործե՛ք նույն օրինակները Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-ի՝ *«Ինչպե՞ս էին Աստվածաշնչի հերոսները հաղթահարում իրենց փորձությունները»,* և Նախագիծ 7-ի՝ *«Անձնական այցելություն Աստվածաշնչի հայտնի անձնավորություններից մեկին»* բաժիններից, որպեսզի քննարկեք, թե ինչո՛ւ են մարդիկ զիջում փորձությանը:

Նաև առի՛թ տվեք ձեր ուսանողներին՝ կիսվել փորձություններին զիջելու իրենց անձնական օրինակներով: Ուշադի՛ր եղեք՝ զտել օրինակները, հատկապես եթե ձեր դասարանը բաղկացած է և՛ տղամարդկանցից և՛ կանանցից: Սեռական փորձությունների մանրամասների քննարկումն այդպիսի միջավայրում կարող է այնքան էլ պատշաճ չլինել: Եթե անգամ ձեր դասարանը միայն մեկ սեռից է բաղկացած, էլի՛ դուք պետք է զգույշ լինեք մանրամասների վերաբերյալ, քանի որ դրանց քննարկումն անգամ կարող է ձեր ուսանողների մոտ անառողջ մտքեր առաջացնել:

Այս հարցը լուծելու ճանապարհներից մեկն ուսանողների այդ օրինակները նախապես ընտրելն է: Դուք կարող եք օգտագործել այն օրինակները, որոնք նրանք գրել են այս դասարանական հանձնարարության մեջ, դրանք նպատակահարմար է օգտագործել առանց տվյալ ուսանողների անունները բարձրաձայնելու:

7. Ուսանողները գնահատում են իրենց անցյալ ձախողումները (5-15 րոպե):

Թող ուսանողները գնահատեն իրենց անձնական կյանքից մեկ կամ երկու ձախողում, երբ նրանք զիջել են փորձությանը: Կարողանու՞մ են գիտակցել պատճառը, թե ինչո՛ւ էին նրանք ընկել: Հնարավոր է՝ մի քանի բաներ են եղել, որոնք պատճառ են հանդիսացել նրանց անկմանը: Հնարավոր է՝ նրանց համար օգտակար լինի հղում անել այն փորձություններին, որոնք նրանք օգտագործել էին այս դասընթացի համար Ուսուցման ուղեցույցի իրենց Նախագծերում:

Մատնանշե՛ք իրենց անկման պատճառները գիտակցելու կարևորությունը: Սա կարող է նրանց օգնել՝ իմանալ, թե որտեղից սկսեն պատրաստվել ապագա փորձությունների համար:

8. Անցկացրե՛ք Գ. կետը. «Ի՞նչ պետք է անել փորձությանը զիջելուց հետո» (10-15 րոպե, Ուսանողի ձեռնարկ, էջ 46-48):

Լուրջ ուշադրությո՛ւն դարձրեք քննարկմանը, թե ինչ պետք է անել փորձությանը զիջելուց հետո: Այս բաժնում տարբեր հարցեր քննարկելուց հետո քաջալերե՛ք նրանց՝ օգտագործել իրենց մտքերը այն փորձությունների համար աղոթելիս, որոնց զիջել են այդ օրը:

9. Ինչպե՞ս Աստված Աստվածաշնչում պատասխանեց մարդկանց, ովքեր ձախողվեցին (5-10 րոպե):

Քննարկելիս, թե ինչ պետք է անել փորձությանը զիջելուց հետո, դուք կարող եք դիտարկել, թե ինչպես արձագանքեցին Աստվածաշնչի որոշ հերոսներ իրենց ձախողումներին: Դավիթն ու Պետրոսը խոստովանեցին իրենց մեղքերը: Հուդա Իսկարիովտացին՝ ոչ: Դուք կարող եք նաև քննարկել, թե Աստված ինչպես պատասխանեց այն մարդկանց, ովքեր խոստովանեցին իրենց մեղքը: Դավիթը մնաց թագավոր, իսկ Պետրոսն առաջ գնաց և դարձավ եկեղեցու կարևոր առաջնորդներից մեկը:

10. Ուխտ անել՝ այլևս երբեք չձախողվել (5 րոպե):

Բացատրե՛ք ձեր ուսանողներին, որ նրանք չպետք է ուխտ անեն Աստծուն փորձությանը զիջելուց հետո: Որոշ քրիստոնյաներ, հնարավոր է՝ մտածեն, որ ուխտ անելը կարող է լավ հոգևոր արձագանք լինել. «Աստվա՛ծ իմ, ես զիջեցի այս փորձությանը: Ես խոստանում եմ, որ այլևս երբեք չեմ զիջի այս

4

փորձությանը»: Այս ձևով ուխտ անելը շատ քիչ է օգնում խնդրի լուծմանը: Սատանան կարող է օգտագործել սա որպես առիթ՝ ավելի մեծ մեղադրանք բերելու այն անձնավորության կյանքում, ով ապագայում նորից կընկնի այդ մեղքի մեջ:

Եթե նրանք ուզում են Աստծո առաջ ուխտ անել, ավելի պատշաճ կլինի ասել. «Աստվա՛ծ իմ, ես ուզում եմ ուխտ անել Քո առաջ, որ ամեն օր ավելի մոտենամ Քեզ: Ես նաև խոստանում եմ _____ ժամանակ հատկացնել ուսումնասիրելու, թե ինչ ունես Դու ինձ ասելու այս փորձության մասին, և թե ինչպես կարող եմ արձագանքել, որ քեզ փառք բերեմ»:

Այս տեսակի խոստումը շատ ավելի հեշտ է պահել և, ընդհանուր առմամբ, ավելի շատ է համապատասխանում Աստծո հետ ավելի մոտ փոխհարաբերություններ զարգացնելուն:

4

11. **Անձնական կիրառում (5 րոպե):**

Անձնական կիրառումը կենտրոնացրե՛ք սեփական ձախողումների վերաբերյալ Աստծո հետ անկեղծ լինելու վրա: Նրանք կարիք ունեն արագ խոստովանելու իրենց մեղքերը:Նրանք նաև կարիք ունեն միջոցներ գտնելու, թե ինչպես իրենց ձախողումներից դասեր սովորեն: Այս ձախողումները պետք է նրանց օգնեն տեսնել, թե որ հատվածում կարիք ունեն ավելի շատ աշխատել՝ ապագա փորձություններին նախապատրաստվելու համար:

12. **Հանձնարարություններ:**

Ա. Գնահատակա՛ն դրեք Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 8-ի՝ *«Նախապատրաստվել փորձությանը»* բաժնի համար: Դուք կարող եք հանձնարարել ձեր ուսանողներին՝ պատասխանել հարց 7-ին՝ նախքան դրանք ձեզ հանձնելը: Եթե դուք այս հանձնարարությունը տաք, հնարավոր է՝ որոշ ուսանողներ լրացուցիչ մի քանի օրվա կարիք ունենան Նախագիծը լրացնելու համար՝ կախված այն բանից, թե երբ են հանդիպել տվյալ փորձությանը, որն օգտագործել են իրենց Նախագծերը գրելիս:

Բ. ասի վերջում տվե՛ք հարցաշար՝ փորձությունները հաղթահարելու վեց քայլերի հիման վրա:

Փորձությունը հաղթահարելու 6 քայլեր

1. Գիտակցի՛ր, որ փորձության մեջ ես:
2. Ասա՛ «ո՛չ» փորձությանը:
3. Սկսի՛ր խոսել Աստծո հետ:
4. Հարցրո՛ւ ինքդ քեզ. «Ի՞նչ կարիք է սատանան փորձում ինձ մղել, որ բավարարեմ»:
5. Փնտրի՛ր այդ փորձությունից դուրս գալու Աստծո ասած ձևը:
6. Նպատակնե՛ր դիր, որոնք քեզ կօգնեն բավարարել քո կարիքներն Աստծո ասած ձևով:

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, էջ 16

4

13. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր քո մտքերը այս դասը բարելավելու նպատակով:
Ո՞ր մասերն են լավագույնս գործել:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվար հասկանալի:
Ի՞նչը, քո կարծիքով, ամենաօգտավետը եղավ քո ուսանողների համար:

Դաս 5:
Ստուգարք

1. **Նախաբան:**

   Ներկայացրե՛ք հաջորդ դասընթացը:

   Ա. Բաժանե՛ք Ուսուցման ուղեցույցը, կամ այլ նախագծեր, որոնք պետք է լրացվեն՝ նախքան դուք դրանք կուսուցանեք հաջորդ դասընթացի առաջին դասին:

   Բ. Թող ուսանողները բացեն իրենց նոր Ուսուցման ուղեցույցի վերջին էջը: Նրանք այնտեղ կգտնեն *Դասարանական Հանձնարարության Յուցակի* չլրացված բլանկի մի օրինակ: Ասացե՛ք նրանց յուրաքանչյուր հարցաշարի, նախագծի և ստուգարքի ժամկետները:

   Գ. Բաժանե՛ք նոր Ուսանողի ձեռնարկը և ասացե՛ք նրանց, թե որ էջն եք ուզում, որ նրանք կարդան՝ նախքան հաջորդ դասը սկսվելը:

5

2. **Ստուգա՛րք անցկացրեք այս դասընթացի վերաբերյալ:**

3. **Եթե դեռ չեք արել, ապա վերադարձրե՛ք այն բոլոր հարցաշարերը և նախագծերը, որոնց դուք գնահատական եք դրել:**

Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը ներառված չէ այս փաստաթղթում, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսանողի ձեռնարկը:

Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցը ներառված չէ այս փաստաթղթի մեջ, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսուցման ուղեցույցը:

Ստուգարք և Վկայական

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-6-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ստուգարքն ու Վկայականը:

Անուն _____ **Փորձություն**

Ամիս, ամսաթիվ_____ **Ստուգարք, 5-րդ խմբագրում**

Դասարան_____ _____ **դասարան**

Ճիշտ-սխալ հարցեր (յուրաքանչյուրը 1 միավոր)

Ցուցումներ. Դի՛ր __X__, եթե պատասխանը ճիշտ է:
Դի՛ր __O__, եթե պատասխանը սխալ է:

1._____Եթե դու դեմ կանգնես սատանային, նա կդադարի քեզ փորձել և կփախչի քեզնից:

2._____Փորձության համար պատրաստվելու լավագույն ձևն Աստծուն ավելի մոտենալն է:

3._____Աստված ուզում է, որ դու ճշմարիտ քրիստոնյա դառնալուց հետո անտեսես քո ցանկությունները:

4._____Հիսուսը երբեք այնքան սաստիկ փորձության չի հանդիպել, ինչպես մարդիկ այսօր:

5._____Սատանան միշտ ուզում է, որ ես մտածեմ այն ամենի վերջնական արդյունքի մասին, ինչ նա ինձ փորձում է անել տալ:

6._____Աստված խոստացել է բավարարել քո բոլոր կարիքները:

7._____Երբ սատանան փորձում է մարդկանց, նա սովորաբար ասում է, որ նրանց փորձում է:

8._____Աստված պատվիրում է մարդկանց՝ ազատվել մեղսալից ցանկություններից:

9._____Քրիստոնյան ոչինչ չի կարող անել, որպեսզի կանխարգելի սատանայի բերած փորձությունները:

10._____Երբ մարդիկ զիջում են փորձությանը, նրանք, սովորաբար, ժամանակավոր բավարարվածություն և հաճույք են զգում իրենց արածից:

11._____Ես երբեք չպետք է փախչեմ այն բանից, որ պատճառ է հանդիսանում իմ՝ մեղքի փորձության հանդիպելուն:

12._____Կարևոր չէ, թե որքան ժամանակ ես հատկացրել նախապատրաստվելուն, սատանան, միևնույն է, կփորձի քեզ, որ մեղք գործես:

13._____Երբ մարդը զիջում է փորձությանը, ավելի հեշտ է դառնում նույն փորձությանը նորից զիջելը:

14._____Երբ մարդը մեղքի փորձության մեջ է, նա անմիջապես պետք է անիծի սատանային:

2, Փորձություն Ստուգարք, 5-րդ խմբագրում

Ճիշտ-սխալ հարցեր

15._____Սատանան երբեք չի փորձի քեզ մեղադրել փորձությանը զիջելու համար այն բանից հետո, երբ դու քո մեղքը խոստովանես Աստծուն:

16._____Եթե ես իմ կարիքները բավարարեմ Աստծո ասած ձևով, սատանան այնքան շատ հնարավորություն չի ունենա ինձ փորձելու այդ ասպարեզներում:

17._____Փորձության մեջ լինելը մեղք է:

18._____Ես միշտ պետք է խոսեմ Աստծո հետ, երբ փորձության մեջ եմ:

19._____Եթե մարդը թույլ տա իր զգացմունքներին՝ վերահսկողությունից դուրս գալ, փորձություններին դիմադրելը չափից ավելի դժվար կլինի:

20._____Նորմալ է մտածել այն բանի մասին, ինչ սատանան քեզ փորձում է, որ անես, եթե դու պարզապես դա չես անում:

21._____Կոնկրետ փորձությանը զիջելուց հետո դու պետք է երդվես Աստծուն, որ այլևս ոչ մի անգամ չես զիջի այդ փորձությանը:

22._____Երբ ես մեղքի փորձության մեջ եմ, միշտ պետք է գտնեմ, թե ինչ կարիք է սատանան ինձ փորձում, որ բավարարեմ:

Բազմաթիվ պատասխաններով հարցեր (յուրաքանչյուրը 3 միավոր)

Ցուցումներ. Ընտրի՛ր լավագույն պատասխանը և համապատասխան տառը գրի՛ր հարցի սկզբում դրված գծիկի վրա:

1._____Փորձությունը հաղթահարելու լավագույն ձևն է.
- Ա. Այն անտեսել (ինքդ քեզ ասա՛. «Այդպիսի բան չկա»):
- Բ. Մտածել աստվածաշնչյան համարների վրա, որոնք խոսում են յուրաքանչյուր փորձության մասին:
- Գ. Ծիծաղել փորձության վրա:

2._____Ինչքա՞ն հաճախ է Աստված փորձում մարդկանց:
- Ա. Եթե տվյալ մարդը մեղավոր է:
- Բ. Երբեմն, երբ մարդը չի հնազանդվում Իրեն:
- Գ. Երբեք:

Կարճ պատասխանով հարցեր

1. Ի՞նչ է փորձությունը: (6 միավոր)

_____

_____

_____

_____

_____

2. 6 բաներ, որոնք դու կարող ես անել փորձությանը **նախապատրաստվելու** համար: (12 միավոր, 2 միավոր յուրաքանչյուր բաժնի համար)

1._____

2._____

3._____

4._____

5._____

6._____

3. Ի՞նչ պետք է մարդը անի (մտածի), երբ մեղքի փորձության մեջ է: Գրի՛ր գործելու 6 քայլանոց ծրագիրը, որը քննարկվել է դասարանում: (18 միավոր, 3 միավոր յուրաքանչյուր բաժնի համար)

1._____

2._____

3._____

4._____

5._____

6._____

4. Ամեն անգամ, երբ սատանան քեզ փորձում է, նա ուզում է, որ դու բավարարես քո կյանքի առնվազն մեկ կարիքը կամ ցանկությունը: Բացատրի՛ր քո կարիքների և ցանկությունների միջև եղած տարբերությունը: (6 միավոր)

_____

_____

_____

_____

_____

_____

_____

5. Բե՛ր կարիքների և ցանկությունների 2 օրինակ: Փորձի՛ր ընտրել այնպիսիները, որոնք սատանան հաճախ է օգտագործում քրիստոնյաներին մեղքի փորձության ենթարկելու համար:
(8 միավոր, 2 միավոր յուրաքանչյուր բաժնի համար)

Ցանկություն _____

Ցանկություն _____

Կարիք _____

Կարիք _____

6. Ի՞նչ պետք է անի քրիստոնյան փորձությանը զիջելուց հետո: Գրի՛ր առնվազն 4 բաներ, որ քրիստոնյան կարող է անել:
(8 միավոր, 2 միավոր յուրաքանչյուր բաժնի համար)

1. _____

_____

2. _____

_____

3. _____

_____

4. _____

_____

7. Գրի՛ր անգիր համարներ: (14 միավոր, 7 միավոր ամեն մի համարը)

Փորձություն

Ստուգարք, 5-րդ խմբագրում

Ստուգարքի պատասխաններ

Էջ 1.

Ճիշտ-սխալ հարցեր
(յուրաքանչյուրը 1 միավոր)

1. X Ճիշտ
2. X Ճիշտ
3. O Սխալ
4. O Սխալ
5. O Սխալ
6. X Ճիշտ
7. O Սխալ
8. X Ճիշտ
9. O Սխալ
10. X Ճիշտ
11. O Սխալ
12. X Ճիշտ
13. X Ճիշտ
14. O Սխալ

Էջ 2.

15. O Սխալ
16. X Ճիշտ
17. O Սխալ
18. X Ճիշտ
19. X Ճիշտ
20. O Սխալ
21. O Սխալ
22. X Ճիշտ

Բազմաթիվ ընտրությամբ հարցեր
(յուրաքանչյուրը 3 միավոր)

1. Բ
2. Գ

Կարճ շարադրությամբ հարցեր

1. Ի՞նչ է փորձությունը (6 միավոր):

   Երբ սատանան փորձում է քեզ, որ խախտես Աստծո օրենքները քո կյանքի կարիքը կամ ցանկությունը բավարարելու համար:

Փորձություն

Ստուգարք, 5-րդ խմբագրում

Ստուգարքի պատասխաններ

Էջ 3.

2. 6 բաներ, որոնք դու կարող ես անել փորձությանը **նախապատրաստվելու** համար (12 միավոր, 2 միավոր յուրաքանչյուր բաժնի համար):

   Խորհուրդ տվող պատասխաններ.

   1. Մոտեցի՛ր Աստծուն:
   2. Աստվածաշո՛ւնչ կարդա:
   3. Իմացի՛ր քո հիմնական փորձությունները:
   4. Իմացի՛ր քո կարիքը կամ ցանկությունը:
   5. Բացահայտի՛ր քո կարիքը բավարարելու՝ Աստծո ասած ձևը:
   6. Որոշո՛ւմ ընդունիր Աստծո ասած ձևով բավարարելու քո կարիքները:
   7. Ազատվի՛ր մեղսալից ցանկություններից:
   8. Զարգացրո՛ւ Աստծուն հաճելի ցանկություններ:
   9. Օգտագործի՛ր աստվածաշնչյան արժեքներ քո ցանկությունները գնահատելու համար:
   10. Սովորի՛ր, թե ինչպես կանխարգելես փորձությունները:

3. Ի՞նչ պետք է մարդը անի (մտածի), երբ մեղքի փորձության մեջ է: Գրի՛ր գործելու 6 քայլանոց ծրագիրը, որը քննարկվել է դասարանում (18 միավոր, յուրաքանչյուրը 3 միավոր).

   1. Գիտակցի՛ր, որ փորձության մեջ ես:
   2. Ասա՝ «Ո՛չ» փորձությանը:
   3. Սկսի՛ր խոսել Աստծո հետ:
   4. Հարցրո՛ւ ինքդ քեզ. «Ի՞նչ կարիք է սատանան փորձում ինձ մղել, որ բավարարեմ»:
   5. Փնտրի՛ր այդ փորձությունից դուրս գալու Աստծո ճանապարհը:
   6. Նպատակնե՛ր դիր, որոնք քեզ կօգնեն բավարարել քո կարիքներն Աստծո ասած ձևով:

Փորձություն

Ստուգարք, 5-րդ խմբագրում

Ստուգարքի պատասխաններ

4. Բացատրի՛ր քո կարիքների և ցանկությունների միջև եղած տարբերությունը: (6 միավոր)
   Խորհուրդ տվող պատասխաններ.
   Կարիքը մի բան է, որը դու պետք է ունենաս լիարժեք և ամբողջական կյանք ապրելու համար:
   Ցանկությունը մի բան է, որը դու ուզում ես, սակայն կարող ես ապրել նաև առանց դրա:

Էջ 4.

5. 8 միավոր (յուրաքանչյուրը 2 միավոր).
   Անձնական պատասխաններ

6. Ի՞նչ պետք է անի քրիստոնյան փորձությանը զիջելուց հետո: Գրի՛ր առնվազն 4 բաներ, որ քրիստոնյան կարող է անել:
   (8 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր).
   Խորհուրդ տվող պատասխաններ.
   1. Ընդունի՛ր քո ձախողումը
   2. Հասկացի՛ր քո կյանքի կարիքը կամ ցանկությունը և ծրագի՛ր կազմիր Աստծո ասած ձևով այն բավարարելու համար:
   3. Գնահատի՛ր քո նվիրվածությունը Քրիստոսին:
   4. Դավանի՛ր զորության վերաբերյալ Աստծո խոստումները:
   5. Հանցանքի ճանապարհով մի՛ գնա:

7. Անգիր համարներ
   (14 միավոր, յուրաքանչյուրը 7 միավոր).

   Ա Կորնթացիների 10:13

   Հակոբոս 4:7-8

Շնորհավորում ենք

_____

-ին, առ այն, որ նա ավարտել է

Փորձություններ

դասընթացի ուսումնական պահանջները:
Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____

Շնորհավորում ենք

_____

-ին, առ այն, որ նա ավարտել է

Փորձություններ

դասընթացի ուսումնական պահանջները:
Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____